A-PDF Image To PDF Demo. Purchase from www.A-PDF.com to remove the watermark

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ

«ԽԱՐԻՍԽ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

15 ԱՄՅԱ

09/4210-15
11.08.15

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1996թ, գրանցվել է 1998թ., իսկ վերագրանցվել է 23.12.2005թ: :

Կազմակերպության գրանցման վկայականի համարն է 03Ա 070490-:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպության նպատակներն են.

1..Հաշմանդամներին ներգրավել աշխատանքի մեջ, հոգալ նրանց հոգևոր պահանջմունքները, բավարարել կուլտուր և կենցաղային պայմանները, ցույց տալ նրանց նյութական և իրավական օգնություն:

2 Կազմակերպել սահմանափակ հնարավորությունների տեր մարդկանց բուժօգնություն, ստեղծել բարոյահոգեբանական կենտրոն, տալ հնարավորություն մարզի հաշմանդամներին տեղում ստանալու անվճար բուժօգնություն, նպաստել ամուրի հաշմանդամների ընտանիքների ձևավորմանը:

3. Հաշմանդամների մեջ հայտնաբերել շնորհալիներին և նրանց արժանացնել նյութական ու բարոյական խրախուսանքների:

4. Հնարավորության սահմաններում միավորել մարզի 4 ենթաշրջանների բոլոր հաշմանդամներին, կազմակերպած միջոցառումների շնորհիվ մեծացնել նրանց ծանոթությունների և շփման շրջանակը:

Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպության խնդիրներն են.

1. Հաշմանդամների շահերի, նրանց իրավունքների, արտոնությունների և ազատությունների պահպանումն ու կատարումը, որոնք նրանց տրված են կառավարության որոշումներով և գործող օրենսդրությամբ:

2. Ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ առանձին հաշմանդամների համար աշխատատեղերի բացում, անհատական ձեռներեցության նպաստում և խրախուսում:

3. Ինֆորմացիայի միջոցների՝ մամուլի, կիոյի, ռադիոյի, հեռուստատեսության և ցուցահանդեսների միջոցով կազմակերպության գործունեությունը բնակչության շրջանում լայնորեն պրոպագանդումը:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքով, Կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով:

Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Իրավաբան, 2. Սոցիոլոգ, 3. հատուկ մանկավարժ, 4. հոգեբան,

5. հաշվապահ

6 լոգոպեդ, 7.ֆիզիոթերապիստ, 8.վերականգնողաբան (կիրավիրվի) և այլն:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են

1. Հաշմանդամներ, նրանց խնդիրները, ազատ և անկախ իրավունքը

Կազմակերպությունը իր գործունեությունը իրականացնում է ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր դրույթների վրա և առաջնորդվում է արդարության անկախության և անկողմնակալության սկզբունքներով:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել

1. Մարզում հաշմանդամների թվի օրեցօր աճը,

2. Մարզի հաշմանդամ երեխաների և երիտասարդների անօգնական վիճակը, աղքատությունը, մեկուսացված լիելը, կրթական ցենզի պակասը, գործազրկությունը...

3. Հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների արտագաղթը մարզից:

4. Մեր հաշմանդամ երիտասարդների առողջ ապրելակերպով չզբաղվելը, սպորտից հեռու լինելը:

5. Մարզում նման կենտրոնների բացակայությունը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2012-2017թ ծրագրի ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2. **Մարդկային կապիտալի զարգացում** բաժինը, մեր կազմակերպության անդամները ցանկանում են հնարավորինս փոխել Սյունիքի և Վայոց Ձորի մարզի հաշմանդամների կյանքի որակը:

Այս առումով գործողություններ ենք իրականացնելու հետևյալ ուղղություններով՝

- Մեր դպրոցահասակ շահառուների համար կենտրոնում իրականացնելու ենք ոչ ֆորմալ կրթություն՝ սեմինարների, համապատասխան ֆիլմերի և խաղերի միջոցով:

Մարզի հաշմանդամ երեխաները և մինչև 35-40 տարեկան հաշմանդամ երիտասարդները անվճար կարող են ստանալ բուժական մերսումներ և օգտվել բժիշկ-վերականգնողաբանի, վերականգնող-թերապիստների ծառայություններից: Ինչպես նաև մեր շահառուները կօգտվեն հոգեբանի և լոգոպեդի ծառայություններից:

- Պարբերաբար մեր երեխաների մասնակցությամբ կկազմակերպենք փոքրիկ համերգներ և միջոցառումներ, մեզ մոտ կհրավիրենք երաժշտական և թատերական խմբերի:
- Կենտրոնում շահառուները կզբաղվեն սպորտային խաղերով՝ ըստ իրենց ունակությունների և հնարավորությունների: Հետագայում հնարավորություն կունենանք մասնակցել ՀՀ Նախագահի կողմից կազմակերպվող առողջ ապրելակերպի մրցումներին:
- Սոցիալապես խոցելի աշխատունակ շահառուների համար կհրավիրենք մասնագետների, որոնք նոր տեխնոլոգիաներով մասնագիտական դասընթացների միջոցով կփորձեն հեշտացնել նրանց աշխատանքի տեղավորման խնդիրը: Համոզված ենք, որ յուրաքանչյուր աշխատող անհատ, անկախ կարգավիճակից, իրեն զգում է անկախ, ազատ, լիարժեք և սոցիալապես ապահով:
- Հաշմանդամ երեխաների ծնողները տեսնելով իրենց բնօրրանում երեխաներին օգտակար լինելու հնարավորությունը հետ կվերադառնան իրենց տները:
- Հոգեբանական աջակցություն սահմանափակ կարողություններով երեխաների ծնողներին:
- Կենտրոնի ակտիվ գործունեությունը, բարենպաստ միջավայրի և ինքնաիրացման պայմանների առկայություն և արդարության ապահովումը կխթանի երիտասարդների համար նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Երիտասարդը, եթե իր տանը ունեցավ աշխատանք, ամուր կկանգնի իր հողի վրա, դա կնպաստի արտագաղթի կանխարգելմանը:
- հասարակության սոցիալապես խոցելի և սահմանափակ կարողություններով խմբերին ծառայությունների թիրախային մատուցում:

2.1. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում կազմակերպության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. ԱՄՆ դեսպանատունը ՀՀ-ում
2. Գերմանիայի դեսպանատունը ՀՀ-ում,
3. Հայ-Ֆրանսիական զարգացման հիմնադրամը,

4. «Առաքելություն արևելք» մարդասիրական կազմակերպությունը:

5. Մարզային իշխանությունը

6. ՀՀ Կառավարությունը:

7. «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը և այլն:

2.2. Ծրագրի իրականացման ժամկետները

Վերականգնողական կենտրոնի ծրագիրը երկարաժամկետ ծրագիր է, որովհետև միայն երկարաժամկետ գործունեության ընթացքում կունենանք շոշափելի արդյունք: Հաշմանդամ երեխային կամ երիտասարդին մեկ կամ երկու տավա ընթացքում չեն օգնում, այլ մշտապես նրանց հետ պետք է տարվի աշխատանքներ, բարոյապես լինել նրանց հենարան: Ցավոք համոզված ենք, որ մեր մարզում դեռ կշարունակեն ծնվել խնդիրներով երեխաներ: Դա է պատճառը, որ որպես ծրագրի իրականացման ժամկետ նշված է 15 տարի /խնդրում եմ հաշվի առնել իրականացվող ծրագրի սպեցիֆիկան/:

2.3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Հատկացված տարածքը վերանորոգել և կահավորել,

2. Շահառուներին առանձնացնել ըստ տարիքի և խնդիրների, որոնց էլ ըստ համապատասխան անհրաժեշտության և գրաֆիկի տրամադրել բժշկական ծառայություններ:

3. Համաձայն նախորոք կազմված աշխատանքային գրաֆիկի աշխատել մեր շահառուների հետ,

4. Կազմակերպել սեմինարներ ոչ ֆորմալ կրթության եղանակներով շահառուների հետ:

5. Կազմակերպել սեմինարներ ոչ ֆորմալ կրթության եղանակներով շահառուների ծնողների հետ:

6. Կազմակերպել միջոցառումներ՝ ընդգրկելով հաշմանդամ երեխաներին, ակտիվացնելով նրանց կյանքը:

7. Կամակերպել սպորտային միջոցառումներ՝ ընդգրկելով երիտասարդ հաշմանդամներին: Խթանել առողջ ապրելակերպի տարածմանը:

8. Հրավիրել մասնագետներ երիտասարդներին նոր մասնագիտություններ սովորեցնելու համար:

9. Իրականացնել տարբեր ծրագրեր, որոնք կնպաստեն մեր երիտասարդների շրջանում գործազրկության վերացմանը՝ <<յուրաքանչյուրին իր հնարավորության շրջանակում>> կարգախոսով:

10. Պարբերաբար տպագրել բրոշուրներ շահառուների և նրանց ծնողների համար:

2.4. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպությունը Կենտրոնի երկարաժամկետ գործունեության ընթացքում կաջակցի շատ հաշմանդամ երեխաների և երիտասարդների:

3. Ներդրումային ծրագիր:

Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպությունը պարտավորվում է նշված տարածքը անհատույց տրամադրելու դեպքում, պայմանագիրը կնքելու օրվանից սկսած, 2 տարվա ընթացքում, յուրաքանչյուր տարում կատարել 500.000 դրամի ներդրում.

առաջին տարում դա կլինի վերանորոգման աշխատանքներում շինանյութի տեսքով:

երկրորդ տարվա ընթացքում ներդրում կարվի շարժական գույքի տեսքով՝ 1 բազմոց, 2 համակարգիչ, 2 սեղան և 2 ահամակարգչային աթոռներ: